



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ  
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎԱԿԱՆ ԹԵՍԻ  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ Կ'ԱՅՅԵԼԵ ՀԱՅ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒՆ

Եկեղեցւոյ մը առաքելութեան մաս կը կազմէ հոգեւոր սնունդ մատակարարել նաեւ անոնց, որոնք կեանքի այս կամ այն պատճառներով հեռու մնացած են բարի ու Աստուածահաճոյ ճամբաներէ եւ ինկած՝ բանտերու տիսուր խուցերուն մէջ:

Յիսուս ինք եկաւ որպէս Լոյս աշխարհի եւ ուզեց մարդիկը դուրս բերել իրենց խաւարային վիճակն, եւ ազատութիւն շնորհել բոլոր բանտարկուած հոգիներուն, յատկապէս անոնց՝ որոնք մեղքին կողմէ կապուած ու բանտարկուած են, եւ չեն կրնար Տիրոջ քաղցր ներկայութիւնը վայելել: Յիսուս ինք եկեղեցւոյ առաքելութեան վերածեց ո՞չ միայն որբերու խնամքը, անօթին՝ կերակրելը, ծարաւածը՝ յագեցնելը, մերկը՝ հագուեցնելը, հիւանդին՝ կարեկցիլը, այլ նաեւ բանտարկեալին այցելութիւն տալը (Մատթեոս 25.35-36), զայն նկատելով՝ իրեն տրուած այցելութիւն մը, ուստի եւ՝ արժանի գնահատանքի ու հատուցման:

Ամերիկայի Արեւմտեան Թեմը, որ իր առաքելութեան եւ ծառայութեան գործունեութիւնը կը նկատէ յատկապէս մեր նոր սերունդի հոգեւոր, հայեցի ու բարոյական դաստիարակութեան կարեւորութիւնը, նաեւ յատուկ կարեւորութեամբ կը շեշտէ բանտարկեալներու տրուած այցելութիւնները եւ անոնց հոգեւոր սնունդ մատակարարելու անհրաժեշտութիւնը: Թեմիս Առաջնորդ Սրբազն Յօր տնօրինումով, տարիներէ ի վեր կանոնաւոր կերպով հոգեւոր սնունդ կը մատակարարուի Լոս Անձելըսի եւ շրջակայքի հայ բանտարկեալներուն:

Շնորհիւ Բարեշնորի Շաֆֆի Սրկ. Կարապետեանի ջանքերուն, Յայց. Առաք. Եկեղեցին բանտարկեալներու հոգեւոր ծառայութիւն մատակարարելու պետական յատուկ արտօնութիւնն եւ ճանաչում ստացած է: Շաֆֆի Սրկ. մեր Թեմի անունով նշանակուած է՝ բանտարկեալներու հոգեւոր մատակարարման ծառայութեան գրասենեակի հայկական բաժանմունքի գլխաւոր խորհրդատու: Սոյն աշխատանքին համար հոգեւոր մատակարար նշանակուած են նաեւ Ազգ. Առաջնորդարանի քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Յոզէ. S. Պարթեւ Վրդ. Կիւիւմեան, որ ամեն Շաբաթ օր կ'այցելէ North County Correctional Facility բանտը, եւ Ս. Խաչ Մայր Տաճարի հոգեւոր հովիներէն՝ Արք. S. Աշոտ Քիևյ. Գամպուրեան, որ ամեն Երկուշաբթի կ'այցելէ Downtown-ի Twin Towers բանտը:

Այս ծիրէն ներս, Շաբաթ, Յունիս 9-ի առաւօտուն, Թեմիս Առաջնորդ Սրբազնը այցելեց Wayside-ի North County Correctional Facility բանտը: Առաջնորդ Սրբազնին կ'ընկերանային Յոզէ. S. Պարթեւ Վրդ. Կիւիւմեան,

Ս. Խաչ Մայր Տաճարի հոգեւոր հովիւներ՝ Արժ. S. Նարեկ Զհին. Փեղիլիանեան եւ Արժ. S. Աշոտ Զհին. Գամպուրեան, Բրշ. Շաֆֆի Սրկ. Կարապետեան, Տիրացու Մանուկ Չուլեան, Ազգային Վարչութեան փոխ ատենապետ Տոքթ. Յակոբ Տէր Մկրտիչեան եւ Տիկ. Արաքսիա Վարդերեսեան:

Բանտի մուտքին, Առաջնորդ Սրբազանը դիմաւորուեցաւ բանտի պատասխանատուներուն կողմէ, որոնց շարքին եին յիսնապետ Ելիօր Մորեհոն եւ տասնապետ Ռէնտըլ Չենփըլ:

Յուզիչ, միաժամանակ ոգեշնչիչ էր պահը. սրահին մէջ, ուր Յայ Եկեղեցւոյ մոմն ու ածուխը կը վառէր ու խունկը կը բուրեր, եւ Ս. Խաչն ու Աւտարանը օրինութիւն կը բաշխէին, բանտի հայ բնակիչները դիմաւորուեցան իրենց հովիւներուն եւ ազգի ներկայացուցիչներուն կողմէ: Տեղի ունեցաւ Եկեղեցական արարողութիւն, կատարուեցաւ խոստովանանք ու բաշխուեցաւ Ս. Յաղորդութիւն:

Արարողութեան աւարտին Առաջնորդ Սրբազանը հայ բանտարկեալներուն փոխանցեց իր պատգամը եւ քաջալերանքի խօսքը: Ան իր գոհունակութիւնը յայտնեց ընձեռուած այս բացառիկ առիթին համար եւ շնորհակալութեան խօսք ուղղեց հիւրընկալ պաշտօնատարներուն, ըսելով, որ իր այս զգացումները փոխանցեն Շերիֆ Լի Պաքայի: Ան հրաւիրեց ներկաները անկեղծօրէն աղօթելու, շնորհը եւ իրենց մեղերուն համար թողութիւն խնդրելու ամենաբարին Աստուծուն, որ իր սերը իրենց կը յայտնէ այսօր: Սրբազանը հայ բանտարկեալներուն ըսաւ, որ անոնք մաս կը կազմէն հայ մեծ համայնքին, եւ անոր համար է որ հոգեւոր սնունդ կը մատակարարուի անոնց՝ Եկեղեցւոյ ներկայացուցիչներուն կողմէ: »Մենք բոլորս մեղաւորներ ենք ու անհնազանդ՝ Աստուծոյ: Սակայն Աստուած ոիս չի պահեր մեզմէ: Աստուած ողորմած է ու բարեւէր, եւ երբ զղանք, ապաշխարենք ու ներում խնդրենք մեր մեղերուն համար՝ մեծ սիրով կ'ընդունի մեզ, որովհետեւ, ինչպէս Աստուծոյ խօսքը կ'ըսէ, Աստուած չ'ուզեր մեղաւորին մահը, այլ՝ անոր դարձն ու փրկութիւնը: Աստուած պատրաստ է ընդունելու ձեզ բոլորդ եւ օրինելու բոլոր անոնք՝ որոնք իրեն կը դառնան: Սակայն անհրաժեշտ է որ նախ մեկո՞ ծգեք ամեն տեսակի հպարտութիւն եւ ընդունիք ձեր կատարած սիսալները, եւ այսօր բանաք ձեր հոգիի աչքերը՝ Աստուծոյ փառքը տեսնելու եւ փրկութեան ճանապարհին քալելու»:

Սրբազանը յիշեցուց նաեւ, որ այս շաբաթավերքը կը գուգաղիահի մեր հաւատքի հօր՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչի Խոր Վիրապէն ելլելուն եւ Ս. Եջմիածնի Եկեղեցւոյ շինութեան տօներուն: Ան պատմելէ Ետք մեր հաւատքի հօր՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի ապրած նեղութիւններն ու կրած տառապանքները եւ տասնինս տարիներու բանտարկութիւնը, հրաւիրեց ներկաները՝ մեծ Սուլրիին նման Աստուծոյ հոգեւոր ներկայութեամբ խաղաղ ու անվախ ապրելու, քաջալերելով զանոնք սպասելու բացուող վաղուան արշալոյսին: Վերջապէս՝ կոչ ուղղեց ներկաներուն, որ քալեն հոգեւոր ճանապարհին, ըլլան մաքուր քրիստոնեաներ, դառնալու համար պարծանքը հայ ժողովուրդին եւ իրենց հարազատներուն:

Պատգամի աւարտին, բոլորը միասին ծնրադիր երգեցին Յայ ժողովուրդի հոգիէն բղխած «Տէր, ողորմեա՛»ն, որուն թուփի եղանակը եւ

աղաքական խօսքերը արտասուրներ ժայթեցուցին բոլորին սրտերէն ու աչքերէն:

Յատուկ կարգադրութեամբ եւ արտօնութեամբ, այս առթիւ հայ բանտարկեալներուն հրամցուեցաւ հայկական ճաշ եւ քաղցրաւենից, տրամադրուած Պապուրեան ընտանիքին կողմէ:

Անհուն էր առթուած ուրախութիւնը եւ երախտագիտական արտայայտութիւնները այս այցելութեան առթիւ, որ իբր քաղցր յուշ պիտի փորագրուած մնայ այդտեղ համախմբուած իւրաքանչիւր հայ բանտարկեալի հոգիին ու սրտին մեց:

«ՏԵ՛Ռ, ՄՈՇՆ աշխարհին խաղաղութիւն, ... բանտարկելոց ազատութիւն»:

Պ.Ա.Կ.

## PRELATE VISITS ARMENIAN INMATES

The Western Prelacy has for years given special attention to the spiritual needs of Armenian inmates and by the ordinance of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, visits to Armenian inmates in the Los Angeles area jails continue to take place on a regular basis. Chaplain Raffi Garabedian has been assigned as advisor in this field and it is owing to his efforts that the Armenian Apostolic Church was granted special privileges to offer spiritual guidance to inmates. By the appointment of the Prelate, Very Rev. Fr. Barthev Gulumian visits the North County Correctional Facility weekly, and Rev. Ashod Kambourian visits the Twin Towers jail also on a weekly basis.

On the morning of Saturday, June 9, the Prelate visited the North County Correctional Facility Wayside jail accompanied by Very Rev. Fr. Barthev Gulumian, Pastors of Holy Cross Cathedral Rev. Nareg Pehlivanian and Rev. Ashod Kambourian, Chaplain Raffi Garabedian, Stole bearer Manuk Chulyan, Executive Council Vice-Chair Dr. Hagop Der Megerdichian, and Mrs. Araksia Varteresian.

The Prelate and delegation were greeted upon their arrival at the facility by Lieut. Elier Morejon and Sgt. Randall Zenpel who escorted them to a hall where the inmates were assembled. A service took place following which the inmates were offered Holy Communion. At the conclusion of services the Prelate delivered his spiritual message which he started by thanking God for the occasion and by greeting the representatives of the Sheriff's Department, asking them to convey his best wishes to Sheriff Lee Baca. The Prelate then invited the inmates to sincerely pray to Almighty God for the atonement of their sins. The Prelate continued, "We have all sinned or been disobedient to God, however God does not hold a grudge against us. God is loving and merciful and when we repent and seek forgiveness He will welcome us back for He does not want the death of the sinner but rather through redemption seeks his salvation. God is ready to accept and bless all those who turn to Him but first you must put aside your pride, admit all wrongdoings, and open your eyes to witness the glory of God".

The Prelate, pointing out that the weekend coincided with the Feast of Holy Etchmiadzin, then proceeded to tell the story of St. Gregory the Enlightener and of all the hardships and suffering he endured, encouraging them to live in the peace that the Holy Spirit offers and to wait patiently for the break of a new dawn. The Prelate lastly urged them to walk in the path of righteousness and to be good Christians to bring pride to the Armenian people and to their families.

At the conclusion of the Prelate's message, a traditional Armenian meal was offered for which special arrangements had been made prior to the visit and which was provided by the Babourian family. The day concluded with the inmates expressing gratitude for the unforgettable occasion and for the spiritual nourishment that was offered to them.